Առջինեկ

հեղինակ՝ Հակոբ Մնձուրի

Մայրս միշտ կըսեր ու կըսեր. «Ա՛խ քեզի... Քչիկ մըն ալ համբերեիր՝ չէ՞ր ըլլար... Իրիկունը տուն գայիր, տունը ծնեիր՝ չէ՞ր ըլլար»:

Ես կխնդայի, «ինչպե՞ս, ինչպե՞ս» կբացականչեի...: «Ինչպեսը կա՞... գետինը, հողերուն վրա աշխարհ եկար... Վա՛յ իմ գլխուս՝ պոռացի, հիմա ես ի՞նչ պիտի ընեմ, իմ առիջնեկս ես, ես բան մը չեմ գիտեր, խանձարուր չունիմ, շոր մը, լաթի մը կտոր չկա քովս, ինչպե՞ս պիտի պեճերեմ» ըսի ես ինծի: Հացիս վալան կար: Թացթաց՝ քեզ խոտերուն վրա դրի, վազեցի վալային: Հացերը թափեցի, քեզ մեջը փաթթեցի: Չեղավ: Կոնակիս սալթան հանեցի, սալթային մեջ քեզ ծրարեցի: Չեղավ: «Ուրտե՞ղ, ուրտե՞ղ ես ծնա»: «Լեռը, Կապույտ Կապաններու ձորը, մեր արտին տակը» կըսեր: «Այդքան հեռուեն ինչպե՞ս տուն բերիր իս»: «Մի հարցներ» կըսեր ու կշարունակեր. «Աս պիտի չապրի, պիտի մեռնի,— կըսեի մտքովս,— բայց ի՞նչ ընեմ, լեռը՞ թողում... ինչ ալ ըլլա՝ պիտի տանիմ...» ու կպատմեր.

«Խոտքաղի ամսուն ծնար: Վարդավառին Պահքին շաբթուն: Հերկերուն, խոտերուն, էգիներուն ամիսը: Այս երեքն ալ այդ մեկ ամսվան մեջ պետք է ընեինք: Արտերը պետք է հերկեինք: Հերկվորին հետ մեկն ալ ըլլալու էր, որ գուղձերուն սեզերը մաքրեր, դուրս նետեր: Եթե ոչ՝ նորեն կբուսնեին: Չհերկեինք՝ աշունը ինտո՞ր պիտի ցանեինք: Հետո՝ ադ ամսուն լեռներուն, ձորերուն խոտերը կհասուննան: Եթե չքաղեինք՝ կհավաքեին: Խոտ չէր մնար: Ուրիշներուն համար արդեն՝ ավելի լավ: Անոնք կքաղեին: Մենք մարագը ի՞նչ պիտի լեցնեինք: Ձմեռը ախոռ մը անասուններուն ի՞նչ պիտի կերցնեինք: Չորս ամիս պիտի ուտեին: Հապա էգիները՞: Ամեն օր էգիները մարդ ըլլալու էր: Մեկ հոգին ալ չէր բավեր: Ո՞ր մեկը պիտի ըներ: Թութերուն ծառերը թոթվելու չէին սպասեր: Կհասուննային, կթափեին գետին: Նոր թութեր կբուսնեին: Այնչափ ծառերուն թութերը չժողվեի՞նք, թողեի՞նք: Լովասները, տախդեղները, լոլիկները փորել կուզեր: Ու բոպկընալ, ջուրը կապել՝ ջրել այնչափ ծառերը, այնչափ խաղողները, մաշըրաները: Առանց ջուրի կչորնային:

Ամեն օրվան պես, քու ծնած օրդ ալ՝ առտուն կանուխ պարպվեցավ տունը:

Տագրս ու հայրդ հերկը գացին: Ներոջս մեծ աղջիկը, տալս անոնց հետ գացին: Պապդ, ներըս, տղաքը էգիները գացին: Դուն ադ օրը մտքերնուս չէիր անցներ, թե պիտի ծնիս: Ի՞նչպես պիտի գիտնայինք: «Հարս,— ըսավ մամդ,— դպրենք, մերերոնք

խոտ քաղելու կերթան լեռը։ Քեզ ղրկեմ, դուն ալ անոնց հետ գնա։ Կապուտ Կապանին մեր արտին ձորին ու լեռանը խոտերը քաղե։ Արտին խոտերը մի քաղեր։ Երբ ըլլա՝ կքաղենք։ Անոնք մերն են։ Ձորն ու լեռը մերը չեն։ Ով ըսես՝ կերթա, կքաղե։ Մեկը չգացած՝ դուն գնա։ Ամենքեն առաջ մենք երթանք։ Հաց առ, մանգաղը առ, ճամբա ելիր։ Ես ցերեկեն ետքը էշը կբերեմ, կբեռնանք, կուգանք»։ «Կըլլա, կերթամ» ըսի։

Քեզմով հոլի էի, վերջին շաբաթներս էին։ «Ինչպես ըլլա՝ ետքի օրերդ չեն,— ըսավ մամդ,— այսօրվան, վաղվան չես, շաբաթ մը, շաբաթեն ավելի օր ունիս»։ Իմ հաշիվովս՝ ես ալ անանկ գիտեի։

Հաց առի, մանգաղն առի, գացի դպրենց։ Մերերոնց հասա։ Լեռը իրարմե զատվեցանք։ Արտին խոտերուն չդպա։ Ձորը իջա, սկսա քաղել։ Ձորին հողը կասկարմիր էր, ավազ էր։ Երկու կողմին կողերը անանկ ալ դարվարի էին, բայց աղեկություն մը կար, որ ոտքերս կբռնեին, չէի սահեր։ Առվույտ ու խոլորձ էին խոտերը։ Ջրարբիներուն երկայն առվույտներեն չէին։ Լեցուն առվույտ էին, զատզատ թուփերու պես բուսեր էին։ Մանգաղիս բերնին անանկ աղվոր կուգային, որ ամեն մանգաղ զարնելուս՝ բուռս կլեցվեր խոտով։ Քաղածներս իրարու վրա կդիզեի, խորոմ կընեի։ Ձորին երկու կողմը երեքականեն՝ վեց խորոմ, շարեցի։ Վանդակ մը եղավ, ըսել է՝ բեռին մեկ կողմը։ Ցերեկ ըլլալուն շատ կար։ «Ալ ձորն ի վար չեմ իջնար,— ըսի մտքով,— մեկալ վանդակս լեռնեն կքաղեմ»։ Ետքն ալ կնստիմ՝ մինչև տունեն էշը գա։

Լեռը ելա։ Ցերեկդեմի արևեն աչքերս խտղտեցան։ Մինչև գագաթը հոտոցիկ էր։ Ցաներ էին՝ կըսես։ Մեր Ակին ձորին, Առվուն վրայի դեղին հոտոցիկներեն չէին միայն։ Գույնգույն, գույնգույն։ Ճերմակ, կանանչ, դեղին, կապկարմիր։ Շատը կարմիր էին, նախըշ բաներ էին՝ լեռան երեսը, կըսես։ Քիչ մըն ալ աղվեսիպոչիկ կային։ Փունջերը անանկ քնքուշիկ կուգային մատներուդ, որ կաքավի աղվամազերուն պես, ապրշումի պես էին։ Կիջնային ու կելլեին ծաղիկներու վրա, բը՛զզ... բը՛զզ... լեռը կբզզար մեղուներե։ Խորոմ մը քաղեցի։ Մեկալ խորոմիս՝ մեջքիս ցավերը սկսան։ Կանցնի՝ ըսի ես ինձի։ «Երեկ ալ ցավեցավ, ետքը անցավ, կուգա ու կերթա»։ Չանցավ։ Քաղը չշարունակեցի։ Մանգաղը ձգեցի։ Նստա։ Չեղավ։ Ոտքի ելա։ Դպրենց նայեցա։ Մերերոնց նայեցա։ Անոնք ալ չկային։ Լեռան մյուս երեսը դարձեր են՝ մտածեցի։ Ցավերս սաստկացան։ Շունչ չէի կրնար առնել։ «Վարը՝ ձորը իջնամ» մտածեցի։

Իջա։ Դիմացս՝ գագաթը, կախմխցի էին, թեփթացի էին, քրդերուն կանչեմ ըսի։ Քիչ մըն ալ համբերեմ՝ ըսի։ Աչքերս մթնեցան։ Ձորը մթնեց։ «Ի՞նչ կըլլա, ի՞նչ կըլլամ» ըսի։ Ու դուն աշխարհ եկար։ Պորտկապդ փրթավ։ Դուն զատվեցար ինձմե։

«Ալ ի՞նչ ընեմ, ալ ո՞ւր երթամ» բացագանչեցի։ «Մինակս հիմա ի՞նչ պիտի ընեմ» ըսի։ «Աս պիտի չապրի, պիտի մեռնի» ըսի։ Խորոմիս առջևը հողերուն,

խիճերուն, խոտերուն վրա էիր։ Վախցա քեզի նայելու։ Կըսես՝ իմ մարմինես չես, ինը ամիս քեզ իմ մեջս չեմ պահած, զավակս չես, խըլեպըլե մըն ես։

Ի՞նչ ընեմ քեզ։ Հողին վրա էիր։ Շոր մը, լաթի կտոր մը չկա, չունիմ՝ քեզ մեջը փաթթեմ։ «Պիտի չապրի, պիտի մեռնի» ըսի նորեն մտքովս։ Ոտքի ելա։ Քեզ թողի։ Հացին վալային գացի։ Մեջի հացը, Վարդավառի պահք էր, աղի բեմկի ու ընկույզ առեր էի, թափեցի գետինը։ Վալան բերի, քեզ մեջը փաթթեցի։ «Վե՜...» մը ըրիր, պոռացիր։ «Մեռած չէ... ողջ է» ըսի մտքովս։

Նորեն չեղավ։ Կոնակիս սալթան հանեցի, քեզ մեջը ծրարեցի։ Վրաս ալ ույժ չմնաց։ Ես, որ քարի պես մարմին մի ունեի, լեցուն պարկ մը ցորենը գրկելուս պես՝ բեռ կբեռնայի, թևերս կախվեցան։

«Վե՜...» ըրիր նորեն, ճչացիր։ «Պիտի չապրի, պիտի մեռնի» ըսի նորեն մտքովս։ «Մեռնի ալ նը՝ հո՞ս պիտի ձգեմ, առնեմ տուն տանիմ, մամդ՝ ի՞նչ գիտեմ՝ ե՞րբ պիտի գա»։

Գետնեն վեր առի, գրկեցի, ճամբա ելա։ Քենե հույս չունեի։ Նորեն ալ քալեցի։ Աղջի՞կ էիր, տղա՞ էիր, վախցա՝ բանալու, նայելու։

Ջիավոր մը անցավ քովես։ Գլուխը ճերմակ ապրշումե փուշիով մը։ Հասանովացի՞ էր, լճացի՞ էր։

Երկու թեղուտցիներ տեսա, որ կուգային՝ երկու էշ առաջքնին։ Կուժեր բեռցեր էին։ Դեմի Կեշեն գյուղերը՝ ծախելու կտանեին։ Շիտակ ճամբով չգացի, չհանդիպելու համար անոնց։

Բլուրն ի վեր Երկու Քարուկի ուղղությունը բռնեցի։ Չուզեցի, որ մարդ տեսնե զիս։ Իջա ու իջա։ Քալեցի ու քալեցի, մարմինս՝ թաց, արյուններու մեջ։

Թևերս ույժ չմնաց։ Նստա։ «Ախ Աստված, ախ Մարիամ Մար, դուն ույժ տուր ինձի» ըսի։ Ծրարին մեջեն ձայն չհանեցիր։ Մեռա՞վ, ի՞նչ եղավ» ըսի։ Նորեն վախցա՝ բանալու, նայելու։

Նորեն ոտքի ելա։ «Հոգիս բերանս գա, ինչ ալ ըլլամ՝ պիտի քալեմ» ըսի։ Երկու Քարուկի ուղղությունը բռնեցի։ Հոնկե՝ Տերվիշի Կողերը, Փարախները, Փոսուն Բուռը, հոնկե՝ հովիտը, կալերը, Տեմուրճենց Մեծ ընկույզին ծառը, հոնկե՝ Ոչխարին Կալը, բակը, տան դուռը։

Գոց էր։ Քովի մերմերոնց Թեղուտցին տեսավ իս։

— Հարս, մերերուն հետ խոտ քաղել չգացի՞ր դուն,— հարցուց։

— Գացի,— ըսի։— Մեր արտը անցա։ Անոնցմե զատվեցա։ Քաղս կես ձգեցի։ Պլիկս եղավ։ Պլիկս առի ու բերի։ Կվախնամ նայելու։ Մեռա՞վ, ո՞ղջ է։

Այլայլվեցավ։ Վազեց ինձի։ «Աղջի՛, ի՞նչ կըսես» պոռաց։ Պլիկին ծրարը գրկեց, իս իրենցը տարավ։ «Հայտի, հայտի, շուտ ընենք» ըսավ։ Նստեցուց իս։ Չուլ փռեց գետինը։ Սավան անցուց վրան։ Երեխի ավազ տաքցուց, տարածեց վրան։ Իս հանվեցուց։ Մարմինս արյուններու մեջ՝ իս պառկեցուց տաք ավազին վրա, ծածկեց ամեն կողմս։ Ալ անկե ետքը ի՞նչ եղա՝ չեմ գիտեր։

Ցերեկն որ կանցնի՝ մամդ էշը բակը կհանե։ «Մինչև հիմա հըլպեթ քաղեց։ Էշը տանիմ, բեռնանք ու գանք» կըսե ինքնիրեն։ Ճամբա կելլե։

Ծեր է։ Կրնա՞ հեծնել։ Էշը առաջքը, ինք՝ ետևեն, կերթան։ Էշն որ չհեծնես, մոտուլովդ չմոտուլես, ինք իր քեֆին ձգես, էշ ըսեր են անոր, կքալե՞։ Երկու ոտք կերթա, կկայնի։ Կամ՝ ճամբան խոտ մը, բույս մը տեսնե՝ անոր կմոտենա։ Իշու ակռաներովը բերան մը, երկու բերան պիտի խածնե, փրցնե, պիտի ուտե։ Աչքը երկու կողմն է, ուրիշ բույս մը, չողան մը, քուշմաթ մը, մկանակռիկ մը, եզանճակտիկ մը, ինչ կուզե ըլլա՝ ան ալ չփրցնե, չծամե, չկլլե՝ ոտք առաջ կնետե՞։ Մինչև որ քամակին ծեծ մը չուտե, պոչին տակը չարյունես, չմռմռցնես՝ դուն որքան բարձր ձայնով «չո՛» պոռաս, գիտե, որ իրեն կուղղես, չի լսել կձևացնե։

Իշու ոտքովը, իր ոտքովը, վերջապես, արտ կհասնին։ Կզարմանա։ Ես չկամ։ Ձորը կիջնա։ Վեց խորոմ քաղվեր է, մարդ չկա։ Լեռը կնայի, խորոմ մը քաղվեր է, հոն ալ մարդ չկա։ Մանգաղը կտեսնե՝ ձգվեր է գետինը։ Վալային հացերը, բեմկիները, ընկույզները թափվեր են խոտերուն մեջ։ Վալան չկա։ Կմտմտա։ «Ըճեբ փորձանք մը եկավ գլխուն» կըսե ինքնիրեն։

Դպրենց, մերերոնց կերթա, կհարցնե.

— Մեր հարսը ի՞նչ եղավ, գիտե՞ք։

— Խոտ կքաղեր,— կըսեն,— պահ մը լեռան մեկալ երեսը գացին, նորեն եկանք՝ չերևցավ, «նորեն ձորը իջավ, ձորը կքաղե զըհար» ըսինք մենք մեզի։

— Ըճեբ փորձա՞նք մը եկավ գլխուն։

— Չէ, փորձանք մը ըլլար՝ մենք պիտի չգիտնայի՞նք,— կըսեն։

Գագաթի քրդու կնիկներուն կերթա կհարցնե։

— Ձորը խոտ կքաղեր, ետքեն չգիտենք՝ ի՞նչ եղավ,— կըսեն։

Էշը առաջքը, մամդ նորեն ետ կդառնա։ Ճամբան թե կքալե, թե կմտմտա։ «Վալան չկա։ Միջի հացը, ընկուզները ինչո՞ւ թափեց գետինը» կսե ինքնիրեն։ Վալան առավ, գնաց, ո՞ւր գնաց։ Տուն դարձավ՝ ըսենք, ճամբան իմ դեմս պիտի ելլեր։ Մեջեն չելլվելիք բան»։

Խաչի Դար կուգա, Խնկենց Արխանը կտեսնե իրենց բակլայի արտը։

— Արխան, մեր հարսը տեսա՞ր, եկավ անցա՞վ ասկե,— կհարցնե։

— Չէ՛,— կըսե,— առտուն անցավ, խոտ քաղել կերթային ձերերուն հետ։ Տեսա։ Ադ գիտեմ, ի՞նչ կա։ Ինչո՞ւ կփնտռես։ Բա՞ն մը եղավ։

— Կնիկմարդ, առտուն ղրկեցի խոտին դարը, Կապույտ Կապանը՝ խոտ քաղելու։ Ես ալ ցերեկեն ետքը էշը կառնեմ, կուգամ, կբեռնանք, տուն կբերենք։ Հիմա գացի՝ ոչ արտին տակի ձորը, ոչ վրայի լեռը՝ հարս չկա։ Խոտը քաղեր է, վեցյոթը խորոմ մը ըրեր է, մանգաղը կա, գետինը՝ ընկուզները, հացերը արտը թափեր է, ինք անհայտ եղեր է։ Աս ո՞ւր գնաց կըսես։ Միտքս հազար դի կերթա։

— Ըմը, հարս մը ըլլալու էր, մեկը, ցերեկին էր, Փոսուն Բուռեն եկավ, հոնկե՝ կալերը, հոնկե՝ հովիտը իջավ։ Տեմուրճենց Ընկուզին տակեն, Ոչխարին Կալեն՝ գեղ մտավ։ Ըճեբ ձեր հա՞րսն էր, կըսես։

— Մերինը ըլլալու չէ, մեր հարսը Կապույտ Կապան ղրկեցի։ Փոսուն Բուռը ինչո՞ւ գա։ Ետ դարձավ ըսենք՝ ճամբան ինծի պիտի հանդիպեր։

Մամդ գյուղ կմտնե, տուն կուգա ու կիմանա քու ծնիլդ, ամենքը, որ պատահեր է»։

Խեղճ մայրս երկու օր աչքերը չէ բացեր։ Մեր տունն ալ չեն կրցեր բերել։ Մերերոնց տունը պառկեր է։ Շունչ մը կելլե ու կիջնա։ Վախցեր են, թե կմեռնի։ Ինծի գրեթե չեն նայեր։ «Ամա՛ն, թող մայրը աղեկնա, ոտքի ելլե, տղան ալ մեռնի նը՝ ի՞նչ ընենք. առջինեկ է, թող մայրը նորեն ուրիշ մը բերե» ըսեր են ամենքը։ Երկու օր իս Դպրենց հարսը, մեկ ալ՝ մերերոնց հարսը եկեր, ծծցուցեր են։ Ես ալ ուտող եմ եղեր։ Առաջին վայրկյանեն, ի՞նչ կըսեք։ Ո՞վ բերանս կոխեր է ծիծը, փակեր եմ, կուռթկուռթ ծծեր եմ։

Երրորդ օրը մայրս կիմանա, որ չեմ մեռեր, ողջ եմ, աղջիկ չեմ, տղա եմ։